L.A. SARGSYAN

CONFLICT AS A PHENOMENON IN TOKAREVA'S STORIES

Life is known to be a struggle. And this "struggle" consists of great number of large and small conflicts, ranging from the global timeless - Hamlet question - "to be or not to be", and ending with our daily - "what shall I do now, at this moment?".

Keywords: Victoria Tokareva, conflict, woman everyday life, struggle, sense of beauty.

ՀՏԴ 82-312.1

Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

ԳՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ԱՐՁԱԿԸ

Քննվում են Վազգեն Շուշանյանի արձակում գոյափիլիսոփայության արծածումները՝ մարդու ներաշխարհի, աշխարհում հերոսի պատասխանատվության բաժնի փնտրտուքի, ենթագիտակցականից իմաստնության անցման ապրումի և մահվան խորհուրդների համապատկերում:

Առանցքային բառեր. գոյափիլիսոփայություն, ներապրում, կենսասիրություն, հոգեբանություն, ազգապահպանություն, խառնվածք, արժանապատվություն, հոսք, սեռ, հետամուտ:

Ներածություն: Ֆրանսահայ գրական ջոկատը լավագույններից է Սփյուռքի ընդհանուր համապատկերում: Նա տասնամյակների մեջ կարողացավ կենսունակ պահել գրական շրջանի ավանդույթները: Ֆրանսահայ գրականության ձևավորման դժվարին գործընթացում իր բացառիկ տեղն ունի Վազգեն Շուշանյանը: Նրա ստեղծագործությունը միանգամայն նոր որակ է սփյուռքահայ գրականության միջօրեականում: Վազգեն Շուշանյանը Փարիզում հաստատվելու առաջին իսկ օրից հետևել է եվրոպական գրականության արժեքներին, արձագանքել գեղարվեստական նորություններին: Ապրելով Փարիզում և գրելով բացառապես հայերեն՝ նա, ինչպես իրավացիորեն նկատում է գրաքննադատ Ալեքսանդր Թոփչյանը, «եղել է համաեվրոպական մշակույթի բուն կոնտեքստի մեջ: Վ. Շուշանյանի արձակը շատ է հիշեցնում «գիտակցության հոսքի» գրականությունը: Թերևս սրանով է, որ նա դարձել է ֆրանսիական «նոր վեպի» նախակարապետներից մեկը» [1]:

Գոյության փիլիսոփայական խորհուրդը և Վ. Շուշանյանի արձակը: Հայ գրականության մեջ Վ. Շուշանյանն առաջիններից է, որ հետևել է դարի առաջին գրական ուղղություններից գոյափիլիսոփայությանը և իր ստեղծագործություններով հաստատել գոյափիլիսոփայական ուղղության ներթափանցումն ու ամրապնդումը սփյուռքահայ գրականության մեջ: Վ. Շուշանյանը սփյուռքահայ գրականության մեջ առաջին հեղինակներից է, որ շոշափել է մարդու ներապրումի, ինքնասուզումի ստեղծագործական գայթակղության հիմնախնդիրը, որի շնորհիվ սփյուռքահայ գրականությունը դուրս եկավ մեծ գրականության մայրուղի: Եվրոպական գոյափիլիսոփայությունը հուշել է հայ գրողին իր քննական ցոլարձակը դարձնել դեպի հավաքա-

կան մարդու ներաշխարհը, ենթագիտակցությունից իմաստավորման անցնելու ապրումը, աշխարհիկ կյանքում հերոսի պատասխանատվության բաժնի փնտրտուքը, մահվան խորհրդի մեկնությունը, գոյապաշտական «խաղի» կանոնների մշակումը: Այստեղից՝ գրական կերպարի, գեղարվեստական երևույթի կառուցողական կայուն եղանակը՝ հոգեբանական խորքային բացահայտումները, և այս բոլորին զուգընթաց՝ փիլիսոփայական գնահատումները՝ առանց բացատրական ճիգի, կերպարից դեպի խառնվածքի անդուլ մղման ներքին և արտաքին օրինաչափությունների ճանաչումը, - ահա Վ. Շուշանյանի գեղարվեստական մտածողության ավազանը: Ֆրանսահայ հեղինակի համար ստեղծագործությունը փրկարար միջոց է՝ պարպելու իմացական-հոգեբանական կուտակումները: Վ. Շուշանյանի գրեթե բոլոր գործերում տեսնում ենք դեմ դիմաց կանգնած փիլիսոփային և ստեղծագործողին: Դեմ դիմաց, բայց ոչ՝ նույն աստիճանի վրա: Գեղարվեստական ենթահողի և ազգային տարազի վրա հյուսված իմաստասիրական շարժման գաղափարները նա փորձում է միավորել՝ ամրապնդելով հայ նորագույն գրական հածումներում «ներապրումի» գրական-փիլիսոփայական շարժումը: Այս ճանապարհին նա հաղթահարում է մեզ համար աննշմար հակասություններ, որոնք երբեմն ծագում են փիլիսոփայի և արվեստագետի միջև: Լինում է և այնպես, որ գեղարվեստականության տարրերը ակամա պարտադրությամբ զոհաբերվում են հայեցողական սկզբունքին: Նշենք դրանցից ամենից հաճախ հանդիպող օրինակը՝ գործողության և կերպարի անընդհատ նվազումի գործոնը, որը ստեղծագործական հատկանիշի է վերաճել փիլիսոփայի «միջամտության» հետևանքով, և որը նախասիրական կիրառություն ունի Վ. Շուշանյանի երկերում: Հիշատակված հատկանիշը նկատելիորեն իրական է դարձնում փիլիսոփայի գերիշխան դիրքը, հարվածում է գեղարվեստական պատումի դիպաշարի ծավալման հնարավորություններին և հանգեցնում նյութի մատուցման միօրինակության իրատեսական վտանգին: Անմիջապես կարելի է վկայակոչել «Ծառերը ծլարձակ» պատմվածքի [1] /1930/ նյութական-տարածքային միջավայրը, որ առանձնապես փոփոխությունների չի ենթարկվում և ամփոփվում է ներաշխարհկորսված հայրենիք ծայրակետերի մեջ:

«Ծառերը ծլարձակ» պատմվածքը փիլիսոփայական նոր հածումների անմիջական արձագանքն է, և հայ գրականության մեջ այն պետք է դասել մեզ արդեն քաջածանոթ «ներապրումի» գեղագիտական համակարգում քչերի մեջ լավագույնների շարքը: Այն առանձին «սյուժետային պատումներից» կառուցված խոստովանանքային պատմվածք է, որով պանծացվում են հոգևոր-զգացական այն արժեքները, որոնք անհրաժեշտ են գրողին կյանքի լիարժեքությունը և ամբողջականությունը ճանաչելու համար: Պատմվածքն աչքի է ընկնում սեղմ դիպաշարով, որի ընձեռած սահմանափակ հնարավորություններում գրողն իրեն դրսևորում է հոգեբանական խորաթափանց վերլուծաբանի՝ ներապրումի համընդգրկուն բացահայտման կարողությամբ: Նա երևան է բերում անհատի հոգևոր նկարագրի լինելիությունը, ապրած կյանքի փիլիսոփայական իմաստավորումը: «Ծառերը ծլարձակ» պատմվածքի

սյուժետային զարգացումը անցյալի և ներկայի համադրված քննությունն է՝ բացված հերոսի ներքին տեսողությամբ: Կարծում ենք, պատահական չպետք է համարել պատմվածքի այս յուրահատկությունը, որը կազմում է Վ. Շուշանյանի ժանրային կառուցողական «դժվարությունը», մի կողմից՝ «հիշողության» ժամանակի (անցյալ), մյուս կողմից՝ «գործողության» ժամանակի (ներկա) գեղարվեստական ընկալման մեջ: Պատմվածքի վերնագիրն անգամ ցույց է տալիս գեղարվեստական միտումնավոր հնարանքը, կառուցողական պատկերի հեռահարությունը: Այն օգնում է՝ քննելու փիլիսոփայական-հոգեբանական հարցադրումները գեղարվեստական փաթեթում: Այգեստանը (այն պետք է հասկանալ որպես հայրենի գյուղաքաղաք) այն պաստառն է, որի վրա պատկերվում է գործողությունների, մտորումների, ապրում-հիշողությունների ստեղծագործական նկարագիրը: Պատմվածքն առաջ է ընթանում անցյալի հիշողությունների վրա հյուսված մոտ քառասուն հաջորդական պատ-կերների շնորհիվ: Այգեստանը դառնում է պաստառ հերոսի մտածումների շղթայական ընթացքի համար: Այս իմաստով պատկերահոս այգեստանը նաև գայթակղության փորձաքար է, քանի որ այն հիշողությունից բացի արտածում է հոգեբանական համակարգված դատողություններ, որոնք առհասարակ «ծանր կը կշռեն» գեղարվեստական գրականության խորքային համամասնություններում: Այգեստանը ամփոփում է հերոսի գեղարվեստական մտածողության և վարքագծի տատանումների կորագիծը՝ միաժամանակ արտացոլելով պատմվածքի գաղափարական հարցադրումների ամբողջականությունը: Պատմվածքի վերնագրի և հերոսի ընտրության համադրական քննությունից բխող եզրահանգումները վերաբերվում են ստեղծագործական առաջադրության լուծման եղանակներին, որոնց գրողը տիրապետում է մի առանձին վարպետությամբ: Անհրաժեշտ է հատկապես ուշադրություն դարձնել հերոսի ապրած «ներկային», որ զուգակշիռ է անցյալի վերապրումին, որքան էլ առաջին հայացքից թվա, թե նրա կյանքը կասեցրել է իր ընթացքը, սակայն այն իր նոր փուլում հերոսին բերում է կյանքի գրավչության ապացույցներ՝ գոյության թրթիռներ, կյանքի ստույգություն՝ հուսալքության և հուսավառության շղթայական հորձանք: Գլխավոր հերոսը ես-ն է՝ ինքը գրողը, որի հիշողության առանցքի շուրջ ծավալվում են ու զարգանում պատմվածքի գործողությունները: Շուշանյանը ինչպես իր մի շարք ստեղծագործություններում, այստեղ ևս իր հերոսներին միտումնավոր կերպով չի անվանադրում: Նրա անհատը հավաքական դիմագիծ ունի: Շուշանյանի ես-ի մեջ մենքն ավելի տարածուն է: Անհատի տիպային ընդհանրացվածության ձգտումը բխում է Շուշանյանի ստեղծագործության առանձնահատկություններից: Գրողի անանուն հերոսն իր հետ բերում է բարոյական նոր ըմբռնում, անհրաժեշտ փիլիսոփայական-գեղարվեստական մտածողություն: Այսպիսի մոտեցումը պիտի համարել գիտակցված ձևական կառույց: Ամենից ավելի գրողը կարևորում է հայացքը, որ ընդհանուր գոյապաշտ փիլիսոփայական համակարգի առարկայացված արտահայտությունն է: Փիլիսոփայական դասերի հիման վրա նա մարդուն տեսնում է մերթ անընկճելի, մերթ անկման, խեղճության, հուսալքության վիճա-

կում: Գեղարվեստական առաջադրույթներից մեկն էլ մարդու փիլիսոփայական ըմբռնման նոր տեղաշարժն է: Կյանքը միմյանցով փոխպայմանավորված վիճակների մի հանրագումար է, որը գրողը վարպետորեն ներկայացնում է իր հարափոփոխ պատկերներում: «Ահա կընթանամ դանդաղ: Աչքերս կլենան սիրելի ու խռովիչ պատկերներով,- հավաստում է գրողը,- երգեր սիրո, կարոտի, երջանկության ու գարնան քաղցրահունչ երգեր, որ կինչեք ու կտարածվիք: Կզարնեք սրտիս դուռը: Կլենաք ներս ու կողողեք ամեն անկյուն ու ամեն որջ» [2]:

Ի տարբերություն անանուն հերոսների՝ այստեղ շրջապատը ներկայացված է որոշակիացված: Այն Ռոդոսթո գյուղաքաղաքն է՝ լի կենդանի հույզերով, տառապանքով, մարդկային երջանկության կարոտ ճակատագրերով: Եթե անցյալի պատկերները մշտավառ սիրով ու բերկրանքով են լցնում գրողի բանաստեղծական հոգին, ապա ներկա կյանքը, հայրենի երկրից կտրվածությունը՝ անանց թախիծով ու տրտմությամբ: «Սիրտս խուլ է ու ցուրտ ու շրթունքներս թանձր,- վկայում է Շուշանյանը,- կգթամ վրաս: Ու մեր հայրենի տունեն հեռու, առանց սիրո ու գուրգուրանքի լուսցուցած բոլոր գիշերներուս հիշատակը զիս արտասվելու չափ կհուզե: Կցավիմ առհավետ կորսված ժամերուն համար, որոնց ընթացքին կրնայի երգել և չեմ երգած, կրնայի ժպտիլ քու երազիդ, բայց նայած եմ խավարին չար աչքերով: Որքան զգվանքներ սառած են ձեռքերուս վրա ու որքան համբույրներ շրթներուս» [2]:

Վ. Շուշանյանը իր ստեղծագործություններում մեծ տեղ է հատկացնում անցյալին, որը նրա անափ կարոտի լուռ վկայությունն է: Շուշանյանի ստեղծագործական աշխարհը ծավալվում ու խորանում է կարոտի հունով, այդ համապարփակ զգացումի պես-պես դրսևորումներով: Շուշանյանը տեսիլքների, երազների միջոցով վերակենդանացնում է իր երկիրը, իր հարազատների ստվերները դարձնում կենդանի: Նա բացում է հիշողության անկյունների փակ դռները, և վերստին իրականություն են դառնում անցյալի ժամերը: Մի խոսքը, մի ինչյունը, առօրյայից անտեսված մեկ մանրամասնը, հայրենի երկրի բնապատկերը նոր իմաստաերանգով են ներխուժում իրական կյանք, դառնում տիրապետող հատկանիշներ: Երազն ու հուշը միախառնված իրական, բայց գրականության մեջ զուսպ ներկայացված կյանքին, լրացնում են, ողողում հերոսի հոգեկան ափունքները: Գեղագիտական հայեցողության համակարգում Վ. Շուշանյանի հակումը «գիտակցության» ներհոսի գործոնների կողմն է, այն մնում է իբրև առաջնային ելակետ: Անցյալը Վ. Շուշանյանի ստեղծագործության մեջ օտար միջավայրի պարտադրող պառակտման դեմ հոգևոր հենարան է, ազգային որոշակի ինքնություն: Նա անցյալը ներկայացնում է ժամանակից ու տարածությունից դուրս մի աշխարհ:

«Շուշանյանը,- գրում է Գեղամ Սևանը,- իր ամենադժնդակ ու ծանր օրերին, ամենադառն րոպեներին իր ուժերի վերականգնման համար միշտ էլ դիմել է իր օրրանին, հայրենի իր հողին, նրա բնությանը, մարդկանց՝ այդ հողից նոր ավյուն ստանալու համար, ավյուն, որ անհրաժեշտ էր օտար քաղաքների, մարդակուլ ուծացող հոսանքի դեմ պատվար կանգնելու համար» [3]:

Ֆրանսահայ գրողը մի առանձին ակնածանքով է պատկերում իր գյուղաքաղաքի մարդկանց, նամանավանդ՝ հարազատներին, որոնց նկատմամբ տածում է մի առանձնակի սեր: Հերոսի սերը հարազատների հանդեպ մտերիմ աշխարհը կորցնելու վախի գիտակցված արտահայտությունն է. նա ամեն վայրկյան ապրում է այդ զգացումով:

Գլխավոր հերոսի հիշողության ծալքերը մեկ առ մեկ բացող, անցյալի մեջ գեղարվեստական տարածք նվաճած հերոսները նրա ծանրագույն օրերի ուղեկիցներն են,- մայրը, հայրը, քույրը,- ծառայում են գեղարվեստական կառույցի մեջ մեկ գլխավոր նպատակի, այն է՝ օգնում են մեզ՝ ավելի լավ ճանաչելու կերպարը: Եվ նրանց միջոցով է, որ բացահայտվում է մի կորովի բնավորություն, հավատավոր սիրով տրոփող սիրտ, պարզ ու անմիջական, միաժամանակ, ազգային արմատի ներուժով թրծված, համառ ու դիմադրական ոգի: Այդ բնավորությունը, սիրտը, ոգին միտում են համընդհանուր, հավաքական սահմանի: Նրանք տրոհված, բեկված, սակայն դեռևս տոկուն ու մարտնչող ամենայն հայկականի խորհրդանիշն են, որոնց անպարտելիության գաղափարը նոր ձևակերպում ու իմաստ է ստանում. «Դուն կրնաս ապաստան տալ հոգնությանս ու քաջալերել զիս, կրնաս լուսավորել ճամփաս ու հիշատակիդ օրհնությունը տեղալ վրաս…» [2]:

Շատ հաճախ գրող-հերոսը մտովի այցելում է հայրենի տուն և գրեթե անսխալ պատկերացնում է հայրենի հարկի ներքո ծավալված զրույցները, ընտանեկան տաքուկ օջախը. նրա աչքի առաջ հեռավոր մշուշների միջից կրկին հառնում են անցյալի պատկերները՝ մեկը մյուսից գրավիչ ու հոգեցունց: «Ահա, ահա, մշուշը հետզհետե կնոսրանա հեռավոր մեր գյուղաքաղաքին վրա: Աչքերս կխոշորանան կարծես ու կլցվին: Կտեսնեմ ամեն, ամեն բան: Մեր փողոցը նախ՝ լայն ու սալահատակված ու մեր տունը սպիտակ ու խաղավետ, լայնախարիսխ ու հյուրընկալ, ինչպես գրեթե գյուղաքաղաքի բոլոր տունները: Ահա մեր պարտեզը արևողող ու կանաչին մեջ խեղված: Ահա մեր ծովը: Ծովեր շատ կան, բայց ուրիշ է մեր ծովը: Մեր ծովը կապույտ է, անուշ, խաղաղ ու սիրուն եզերքներով: Ահա մեր փողոցները, բոլորն ալ կարծես առանց անունի, որը լայն, ընդարձակ, հանգիստ մը նստած իր խարիսխին վրա, որը՝ օձապտույտ, նեղ, կիսամութ: Ու տունները…» [2]:

Պատմվածքի հենց սկզբից տեսնում ենք հերոսին բնության և մարդու փոխհարաբերության համադրման ներքին խռովքով [3]: Հայրենի բնաշխարհը հերոսի հոգում քաղցր հուզումներ է առաջ բերում: Ստեղծագործության մեջ գույների խաղը ամենևին էլ հանգիստ ու միօրինակ չէ: Բնությունը տրամադրող է, բացվում է հերոսի (հերոսների) հոգեկան աշխարհը: Բնության և մարդկային հարաբերությունների միջև հերոսը մեկընդմիշտ կատարել է իր ընտրությունը՝ բնությունը՝ հանձին իր բնաշխարհի: Հոգեզգացական աշխարհին տրվելու ներքին հուզումը հերոսին ազատել է այն գիտակցությունից, թե կյանքում տիրականը ոչինչն է, բնության գերիշխանությունը ևս հենվում է նման մտահանգումների վրա: Վ. Շուշանյանին հիացնում է մարդու ներաշխարհի թռիչքը: Նրան հիացնում է առավել ևս տառա-

պանքի մեջ մարդու դիմակայության սահմանը, երբ նա չի հանձնվում թշվառության կամ խեղճության հորձանքին: Հենց այդ ճանապարհին է գտնվում հեղինակի համար հերոսի գոյության խորհուրդը: «Ես, որ մենավոր՝ ծառի մը տակ նստած կմտածեմ, թե երբ իմ տանս վրա ալ գարուն պիտի իջնե, պիտի ծաղկին ծառերը ու վարդենիները վերջապես իմ թաց ու խոնավ պատերես ի վեր հասակ պիտի նետեն» [3]:

Նրա ես-ը՝ բարոյական հանձնառություն կրողը, որ դիմակայում է ժամանակին և հոռետես գաղափարներին, պատրաստ է իրագործել «ապրելու դատապարտվածությունը»՝ արձակագիր-փիլիսոփայի գոյափիլիսոփայական գեղագիտական ծրագիրը:

«Ծառերը ծլարձակ» պատմվածքն իր փիլիսոփայական հակվածությամբ, հոռետես թե լավատես,- երկու դեպքում էլ իրական տեսադաշտով,- գեղարվեստական կառույցի կատարելությամբ դասվում է 20-րդ դարի 30-ական թվականներին ստեղծված սփյուռքահայ լավագույն պատմվածքների շարքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **«Երեկոյան Երևան»,** Եր., 1991, 10-ը սեպտեմբերի, թիվ 167:
2. **Վազգեն Շուշանյան**, Երկիր հիշատակաց, Եր., 1966:
3. **Գեղամ Սևան**, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր /1920-1945/, Եր., 1980:

А.П. КАРАГУЛЯН

ЭКЗИСТЕНЦИАЛИЗМ И ПРОЗА ВАЗГЕНА ШУШАНЯНА

Исследуется экзистенциалистический смысл в прозе Вазгена Шушаняна, внутренний мир человека, переход к живому пониманию подсознания, доля ответственности героя в мире и смысл смерти.

Ключевые слова: экзистенциализм, переживание, жизнелюбие, психология, сохранение нации, характер, достоинство, поток, жанр, преследующий.

H.P. KARAGULYAN

EXISTENTIALISM AND VAZGEN SHUSHANYAN'S PROSE

The existentialistic sense in Vazgen Shushanyan's prose, the inner world of a man, the transition to the live understanding of subconseiousness the share of hero's responsibility in the world and the meaning of death are investigated.

Keywords: existentialism, inner world, flow, sex, love of life, psychology, character, dignity.